Աշխատաժողով փաստաբանների և լրագրողների համար

25.03.2026 16:49

2026 թվականի մարտի 21-ին մեկնարկել է փաստաբանների և լրագրողների երկօրյա աշխատաժողովը «Փաստաբանների և լրագրողների համագործակցությունը հանուն մարդու իրավունքների պաշտպանության» խորագրով, որը նպատակ ունի ամրապնդել երկու կարևոր մասնագիտական համայնքների փոխգործակցությունը և նպաստել մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների զարգացմանը:
Ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը և Հայաստանի զանգվածային լրատվական միջոցների ասոցիացիայի նախագահ Լևոն Սուլթանյանը:
Աշխատաժողովի ընթացքում քննարկվում են մի շարք արդիական և գործնական նշանակություն ունեցող թեմաներ, այդ թվում՝ փաստաբանների մասնագիտական գործունեության խոչընդոտները և դրանց լուսաբանման առանձնահատկությունները, ՁԼՄ-ների մասնագիտական գործունեության խոչընդոտները և իրավաբանական օգնության առանձնահատկությունները, Փաստաբանների և լրագրողների համագործակցությունը որպես մասնագիտական իրավունքների պաշտպանության միջոց, Հայաստանում անվճար իրավաբանական օգնության խնդիրները և այլն:

Աշխատաժողովի շրջանակում կարևոր իրադարձություն դարձավ նաև ՀՀ փաստաբանների պալատի և Հայաստանի զանգվածային լրատվական միջոցների ասոցիացիայի միջև համագործակցության հուշագրի ստորագրումը, որի նպատակն է ձևավորել ինստիտուցիոնալ գործընկերություն՝ հիմնված փոխադարձ վստահության և մասնագիտական սկզբունքների հիման վրա՝ համատեղ ուժերով մասնագիտական գործունեությանը խոչընդոտող խնդիրներին արձագանքելու նպատակով:

Քննարկումները ուղեկցվում են առկա խնդիրների և մարտահրավերների վերլուծությամբ և համատեղ լուծումների առաջարկներով:
Աշխատաժողովը կազմակերպվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

Բեռնել հուշագիրը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })